ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԵՎ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՈՒ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲՆՅՐՈՒԹԻՑ

Սրտագին ուրախությամբ մենք իմացանք Ձերդ Սրբության ընտրությունը որպես Կոթողիկոս Ամենայն Հայոց: Անձնապես և Կիլիկյան միաբանության ու թեմական համայնքների անունից մենք շնորհավորում ենք Ձերդ Սրբության գահակալությունը Ս. Դանի վրա: Մենք աղոթում ենք Ձեր երկար կյանքի և հաջողության համար, և Հայ եկեղեցու եվիրապետական Աթոռների պահպանության և նրանց ամպհովանու ներքև համայն հայ ժողովրդի բարգավաճման համար:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ՝
ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ

Շնորհավորում ենք Ձեր ընտրությունն ու օծումը հնգոտ Ամենայն Հայոց Հայրապետության և ի սրտե մաղթում ենք ջերմապես կարողություն՝ շատ երկար տարիներ խաղաղությամբ և արդյունավորությամբ ծառայելու եկեղեցուն, լեցնելով նրա բազմապիսի կարոտությունները, ապահովելով նրա բարեկարգությունն ու կարգապահությունը, պահելով նրա զավակները կենդանի հավատի մեջ, Ս. Հոգվույն առաջնորդությամբ: Խնդրում ենք Ձեր հայրապետական անդրանիկ օրհնությունը Թյուրքիայի Ձեր հոգևոր զավակների:

ՊԱՏՐԻԱՐՔ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՅՈՑ՝
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻՑ

Մեր և մեր ողջ միաբանության անունից ներկայացնում ենք Ձերդ Սրբության մեր խորին և հարգալից շնորհավորությունները Կաթողիկոսական Դանի վրա Ձեր բարձրացման և օծման առթիվ: Աղաչում ենք Ամենակարողից տալու Ձերդ Սրբության երկար կյանք և Մայր Աթոռին բարգավաճություն:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ՝
ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆ